ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«18» մայիսի 2016 թվականի N: 141-Ա ք.Գյումրի

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 326-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N:1204-Ն որոշմամբ հաստատված «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման» կարգի 3-րդ և 4-րդ կետերի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակել մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Սամվել Գրիգորյանին:
2. Հանձնարարել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին.
   1) ապահովել «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը,
   2) տեղեկատվություն փնտրողին մատչելի ձևով բացատրել տեղեկատվության տրամադրման կարգը, պայմանները և ձևերը,
   3) մշակել ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալները:
3. Սույն որոշման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Խաչատուր Պողոսյանին:
4. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի դեկտեմբերի 5-ի «Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակելու մասին» N:326-Ա որոշումը:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է